ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

# Հայաստանի Հանրապետության 2017թ. խոշորացվող համայնքների նկարագրություն

# ՄԱՐՄԱՇԵՆ

## համայնք

## (Մայիսյան, Լեռնուտ, Կապս, Կարմրաքար, Կրաշեն, Հացիկ, Հովունի, Մարմաշեն, Մեծ Սարիար, Շիրակ, Ջաջուռ, Ջաջուռավան, Վահրամաբերդ, Փոքրաշեն և Քեթի բնակավայրեր)

Հեղինակ՝ Սարգիս Թովմասյան

Երևան – 2017

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔ

Մարմաշեն խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվում է 15 գյուղ՝ Մայիսյան (համայնքի կենտրոն), Լեռնուտ, Կապս, Կարմրաքար, Կրաշեն, Հացիկ, Հովունի, Մարմաշեն, Մեծ Սարիար, Շիրակ, Ջաջուռ, Ջաջուռավան, Վահրամաբերդ, Փոքրաշեն, Քեթի:

Համայնքի կազմավորումը նպատակ ունի ստեղծել տարաբնակեցման համակարգի նոր տեղային (զարգացման) կենտրոն՝ նպաստելով տարածքների համաչափ զարգացմանը և ապահովելով հանրային ծառայությունների հասանելիությունը համայնքի կազմում ընդգրկվող գյուղերի բնակիչների համար:

Համայնքում բնակչությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 13379 մարդ, վարչական տարածքը կազմում է 18546 հա:

**Փնջի ընդհանուր նկարագիրը**

Մարմաշեն համայնքի գյուղերը գտնվում են մարզկենտրոն Գյումրիից հյուսիս, հյուսիս-արևելք և հյուսիս-արևմուտք ընկած տարածքներում: Մայիսյան, Մարմաշեն, Հացիկ և Շիրակ գյուղերը Շիրակի դաշտի հարթավայրային գոտիներում են, Հովունին՝ նախալեռնային, մնացած գյուղերը՝ լեռնային գոտում, Փամբակի լեռների ստորին լանջերին:

Գյուղերի բարձրությունները ծովի մակերևույթից տատանվում են 1620մ (Մարմաշեն)-1880մ (Կրաշեն) միջակայքում:

Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը զով է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը կազմում է 450-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են:

Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Բնակչության զբաղվածության հիմնական ուղղություններն են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների մշակությունը, անասնապահությունը, որոշ գյուղերում՝ նաև թռչնաբուծությունն ու մեղվաբուծությունը:

Տարածաշրջանում կան արդյունաբերական նշանակություն ունեցող բնական պաշարներ, մասնավորապես, տուֆ (Մայիսյան, Մարմաշեն, Հացիկ), խիճ (Ջաջուռ), պեմզա (Վահրամաբերդ), ածուխ (Հացիկ), քաղցրահամ ջրեր (Մարմաշեն, Ջաջուռ):

Համայնքի կազմի մեջ մտնող գյուղերում առանձնապես կարևորվում են գյուղամիջյան ճանապարհների և խմելու ջրագծերի նորոգման, գազաֆիկացման, դպրոցական գույքի արդիականացման և գյուղատնտեսական արտադրանքի իրացման խնդիրները:

***Համայնքի փուլերի համադրում «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգով» սահմանված՝ խոշոր համայնքի փեսլականի պայմանների և խոշորացման չափորոշիչների հետ***

_1. Տեղականով սահմանված՝ բավարար մարդկային ռեսուրսների պայման և խոշորացման չափորոշիչներից՝ առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոնի առկայություն._

Համայնքի կազմում ընդգրկվող գյուղերից բնակչության նվազագույն քանակ ունի Կարմրաքարը՝ 50 բնակիչ, առավելագույն քանակ՝ Մարմաշենը՝ 2177 (Աղյուսակ 1):

Չնայած համայնքի կազմում ընդգրկվող որոշ գյուղերում հաշվառված բնակչությունը 2001-2016թ.թ. նվազել է (Լեռնուտ, Կարմրաքար, Կրաշեն, Հացիկ, Ջաջուռավան, Քեթի), ընդհանուր առմամբ բնակչությունն աճել է 15 տոկոսով, ինչը դրական գործոն կարելի է համարել: Այսուհանդերձ, մտահոգիչ է այն հանգամանքը, որ բնակչության նվազման միտումը դրսևորվում է հատկապես փոքր գյուղերում:

Մայիսյան գյուղի բնակչության թվաքանակն ավելի պակաս է, քան համայնքի կենտրոնի համար խոշորացման չափորոշիչներով սահմանվածը, սակայն բնակչության աճի ներկայիս տեմպերը պահպանելու պարագայում, ապագայում այն կարող է հասնել անհրաժեշտ նվազագույն թվին:

Աղյուսակ 1. Մարմաշեն խոշորացվող համայնքի բնակչության շարժընթացը և խտությունը

| | Համայնք (բնակավայր) | Վարչական տարածքը /հա/ | Հաշվառված բնակչություն | | բնակչ.փոփոխութ. Տոկոս | Բնակչության խտությունը/մարդ/քառ.կմ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 2001թ. | 2016թ. | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Մայիսյան | 1676 | 1653 | 2021 | 122 | 121 |
| 2 | Լեռնուտ | 880 | 181 | 150 | 83 | 17 |
| 3 | Կապս | 812 | 720 | 1020 | 142 | 126 |
| 4 | Կարմրաքար | 941 | 52 | 50 | 96 | 5 |
| 5 | Կրաշեն | 1340 | 294 | 285 | 97 | 21 |
| 6 | Հացիկ | 1213 | 1081 | 1023 | 95 | 84 |
| 7 | Հովունի | 1136 | 687 | 689 | 100 | 61 |
| 8 | Մարմաշեն | 1220 | 1876 | 2177 | 116 | 178 |
| 9 | Մեծ Սարիար | 1893 | 379 | 400 | 106 | 21 |
| 10 | Շիրակ | 1674 | 1081 | 1138 | 105 | 68 |
| 11 | Ջաջուռ | 2416 | 824 | 949 | 115 | 39 |
| 12 | Ջաջուռավան | 26 | 307 | 245 | 80 | 942 |
| 13 | Վահրամաբերդ | 820 | 1155 | 1909 | 165 | 233 |
| 14 | Փոքրաշեն | 746 | 205 | 233 | 114 | 31 |
| 15 | Քեթի | 1753 | 1105 | 1090 | 99 | 62 |
| | Ընդամ/միջին | 18546 | 11600 | 13379 | 115 | 72 |

Բնակչության խտության ցուցանիշները  անբավարար են նախկին  Կարմրաքար, Լեռնուտ, Կրաշեն և Մեծ Սարիար համայնքներում, իսկ նոր խոշորացվող համայնքի

կտրվածքով այն կարելի է ընդհանուր առմամբ բավարար համարել, չնայած այն հանրապետական միջին ցուցանիշից պակաս է 35 տոկոսով:

*2. Տեսլականով սահմանված՝ բավարար բնական ռեսուրսներով ապահովված լինելու պայման*

Մեկ բնակչի հաշվով քաղաքացիների սեփականության գյուղատնտեսական հողերի ամենամեծ ծավալները նախկին Կարմրաքար համայնքում են՝ 1,49 հա, համայնքային սեփականության հողերինը՝ Լեռնուտ համայնքում՝ 4,32 հա: Նշված հողերի գումարային ամենամեծ ծավալը նույնպես նախկին Լեռնուտ համայնքում է և հավասար է 5,12 հեկտարի (Աղյուսակ 2):

Նախկին Ջաջուռավան համայնքում գյուղատնտեսական նշանակության հողեր ընդհանրապես չկան, իսկ Փոքրաշենում միայն համայնքային սեփականության գյուղատնտեսական հողեր կան:

Աղյուսակ 2. Գյուղատնտեսական, հատուկ պահպանվող տարածքների, անտառային և արդյունաբերական նշանակության հողերը Մարմաշեն խոշորացվող համայնքում

| | Համայնք (բնակավայր) | Հաշվառված բնակչություն 2016թ. | Գյուղատնտեսական հողեր | | | | | | | Հատուկ պահպանվող տարածքների | Անտառային | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Քաղաքացիների սեփականություն | Համայնքի սեփականություն | Պետական սեփականություն | 1 բնակչի հաշվով | | | | | | |
| | | | | | | Քաղաքացիների սեփականություն | Համայնքի սեփականություն | Ընդամենը | պետական սեփականություն | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 1 | Մայիսյան | 2021 | 741,2 | 603,3 | 150,1 | 0,37 | 0,30 | 0,67 | 0,07 | 3,8 | 0,0 | 221,1 |
| 2 | Լեռնուտ | 150 | 120,2 | 647,4 | 0,0 | 0,80 | 4,32 | 5,12 | 0,00 | 2,1 | 26,3 | 2,7 |
| 3 | Կապս | 1020 | 190,5 | 209,2 | 0,0 | 0,19 | 0,21 | 0,39 | 0,00 | 1,9 | 82,9 | 13,9 |
| 4 | Կարմրաքար | 50 | 74,7 | 0,0 | 0,0 | 1,49 | 0,00 | 1,49 | 0,00 | 6,1 | 0,0 | 1,1 |
| 5 | Կրաշեն | 285 | 159,8 | 675,6 | 0,0 | 0,56 | 2,37 | 2,93 | 0,00 | 1,3 | 396,7 | 19,7 |
| 6 | Հացիկ | 1023 | 545,7 | 400,0 | 0,0 | 0,53 | 0,39 | 0,92 | 0,00 | 9,1 | 0,0 | 16,0 |
| 7 | Հովունի | 689 | 146,7 | 214,9 | 0,0 | 0,21 | 0,31 | 0,52 | 0,00 | 1,7 | 0,0 | 14,2 |
| 8 | Մարմաշեն | 2177 | 639,2 | 402,0 | 68,4 | 0,29 | 0,18 | 0,48 | 0,03 | 38,1 | 4,1 | 14,7 |
| 9 | Մեծ Սարիար | 400 | 297,3 | 1277,1 | 428,2 | 0,74 | 3,19 | 3,94 | 1,07 | 1,9 | 244,1 | 12,8 |
| 10 | Շիրակ | 1138 | 786,0 | 594,8 | 0,0 | 0,69 | 0,52 | 1,21 | 0,00 | 23,9 | 0,0 | 11,7 |
| 11 | Ջաջուռ | 949 | 331,4 | 1340,7 | 0,0 | 0,35 | 1,41 | 1,76 | 0,00 | 11,2 | 577,3 | 25,9 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 12 | Ջաջուռավան | 245 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,00 | 0,00 | 0,00 | 0,00 | 0,0 | 0,0 | 0,4 |
| 13 | Վահրամաբերդ | 1909 | 206,2 | 146,3 | 0,0 | 0,11 | 0,08 | 0,18 | 0,00 | 25,5 | 0,0 | 26,4 |
| 14 | Փոքրաշեն | 233 | 0,0 | 706,3 | 0,0 | 0,00 | 3,03 | 3,03 | 0,00 | 0,7 | 0,0 | 4,3 |
| 15 | Քեթի | 1090 | 561,2 | 979,1 | 0,0 | 0,51 | 0,90 | 1,41 | 0,00 | 52,3 | 0,0 | 57,4 |
| | Ընդամ./միջին | 13379 | 4799,9 | 8196,8 | 646,8 | 0,36 | 0,61 | 0,97 | 0,05 | 179,4 | 1331,4 | 442,2 |

Խոշորացվող համայնքում պետական սեփականության գյուղատնտեսական հողերը կազմում եմ ընդամենը 646,8 հա (կամ0,05 հա՝ 1 բնակչի հաշվով) և դրանց 66 տոկոսը Մեծ Սարիարում է:

Մասնավոր և համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերի միջինացված ցուցանիշը փոքր-ինչ ավելին են հանրապետական միջին ցուցանիշից:

Խոշորացվող համայնքում անտառային ֆոնդի հողերը 1331,4 հեկտար են. դրանց մեծ մասը նախկին Ջաջուռ, Կրաշեն և Մեծ Սարիար համայնքներում են:

442,2 հեկտար կազմող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կեսը Մայիսյանում է, նախկին արդյունաբերական հանգույցի հատվածում: Այս հանգամանքը նոր ձևավորվող համայնքի կենտրոնում արտադրական կարողությունների զարգացման  համար բարենպաստ պայմաններ է ստեղծում:

*3. Համայնքների խոշորացման փեսլականով սահմանված՝ բավարար ֆինանսական ռեսուրսներ ունենալու պայման*

Խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվող նախկին համայնքներից սեփական եկամուտները մեկ բնակչի հաշվով հանրապետության միջին ցուցանիշին հավասար կամ դրանից բարձր են եղել  միայն Լեռնուտում, Կրաշենում, Հացիկում և Շիրակում (Աղյուսակ 3):

Այդ ցուցանիշը շատ ցածր մակարդակի վրա է եղել Ջաջուռավանում, Վահրամաբերդում և Փոքրաշենում, քանի որ այդ համայնքները զուրկ են տեղական բյուջեի սեփական եկամուտների հիմնական աղբյուր հանդիսացող հողային ռեսուրսներից: Այդ հանգամանքն ազդել է  խոշորացվող համայնքի՝ 1 բնակչի հաշվով  միջին եկամուտի ցուցանիշի վրա, որը հանրապետական ցուցանիշից պակաս է 30 տոկոսով:

Աղյուսակ 3. Սեփական եկամուտների ծավալները Մարմաշեն համայնքում

| | Համայնք (բնակավայր) | Հաշվառված բնակչություն 2016 թ. | Սեփական եկամուտ | |
|---|---|---|---|---|
| | | | 2013-2015թ.թ. տարեկան միջին /հազ.դրամ/ | 1 բնակչի հաշվով |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 1 | Մայիսյան | 2021 | 10701 | 5,3 |
| 2 | Լեռնուտ | 150 | 1095 | 7,3 |
| 3 | Կապս | 1020 | 4806 | 4,7 |
| 4 | Կարմրաքար | 50 | 483 | 9,7 |
| 5 | Կրաշեն | 285 | 1093 | 3,8 |
| 6 | Հացիկ | 1023 | 9278 | 9,1 |
| 7 | Հովունի | 689 | 4306 | 6,2 |
| 8 | Մարմաշեն | 2177 | 11976 | 5,5 |
| 9 | Մեծ Սարիար | 400 | 2020 | 5,1 |
| 10 | Շիրակ | 1138 | 10028 | 8,8 |
| 11 | Ջաջուռ | 949 | 4745 | 5,0 |
| 12 | Ջաջուռավան | 245 | 242 | 1,0 |
| 13 | Վահրամաբերդ | 1909 | 5403 | 2,8 |
| 14 | Փոքրաշեն | 233 | 573 | 2,5 |
| 15 | Քեթի | 1090 | 4324 | 4,0 |
| | Ընդամ./միջին | 13379 | 71073 | 5,3 |

*<u>4. Բնակավայրերի և համայնքի կենտրոնի միջև տրանսպորտային կապերը և ավտոմոբիլային ճանապարհների վիճակը</u>*

Աղյուսակ 4-ում ներկայացված է Մարմաշեն համայնքում տրանսպորտային կապերի և ավտոճանապարհների վիճակի ընդհանուր պատկերը: Բերված տվյալները ցույց են տալիս, որ համայնքի կազմում ընդգրկվող գյուղերից 5-ը գտնվում են համայնքի կենտրոնից բարենպաստ հասանելիության տիրույթում, 8-ը՝ սահմանափակ բարենպաստության, և միայն Մեծ Սարիարն է անբարենպաստ հասանելիության տիրույթում: Այսուհանդերձ, գյուղերը համայնքի կենտրոնին կապող ավտոճանապարհները հիմնանորոգման կարիք ունեն:

Աղյուսակ 4. Տրանսպորտային կապերի և ավտոճանապարհների վիճակը Մարմաշեն համայնքում

| | Համայնք (բնակավայր) | Բարձրությունը ծովի մակերևույթից | Հեռավորությունը համ.կենտրոնից | | Հասանելիություն | Ճանապարհի վիճակը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կմ | րոպե | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Մայիսյան* | 1660 | 7 | 14 | Բարենպաստ | Բավարար |
| 2 | Լեռնուտ | 1830 | 9,5 | 30 | Սահմ.բարենպ. | Հիմնանորոգ.կարիք |
| 4 | Կապս | 1700 | 13,3 | 17 | Սահմ.բարենպ. | Ընթաց. նորոգ.կարիք |
| 5 | Կարմրաքար | 1800 | 6,5 | 22 | Սահմ.բարենպ. | Հիմնանորոգ.կարիք |
| 6 | Կրաշեն | 1880 | 18,9 | 29 | Սահմ.բարենպ. | Հիմնանորոգ.կարիք |
| 7 | Հացիկ | 1650 | 3,9 | 15 | Բարենպաստ | Հիմնանորոգ.կարիք |
| 8 | Հովունի | 1750 | 5,2 | 12 | Բարենպաստ | Հիմնանորոգ.կարիք |
| 2 | Մարմաշեն | 1620 | 9,3 | 15 | Բարենպաստ | Բավարար |
| 9 | Մեծ Սարիար | 1905 | 19,7 | 31 | Անբարենպաստ | Հիմնանորոգ.կարիք |
| 10 | Շիրակ | 1650 | 7,5 | 24 | Սահմ.բարենպ. | Բավարար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 11 | Ջաջուռ | 1683 | 18,1 | 27 | Սահմ.բարենպ. | Հիմնանորոգ.կարիք |
| 12 | Ջաջուռավան | 1788 | 18,4 | 28 | Սահմ.բարենպ. | Ընթաց. նորոգ.կարիք |
| 13 | Վահրամաբերդ | 1650 | 11,9 | 16 | Սահմ.բարենպ. | Բավարար |
| 14 | Փոքրաշեն | 1900 | 7,2 | 9 | Բարենպաստ | Բավարար |
| 15 | Քեթի | 1750 | 3,2 | 5 | Բարենպաստ | Բավարար |

*Հեռավորությունը մարզկենտրոնից;

5. Կրթական, առողջապահության և մշակութային ենթակառուցվածքներ

Բավարար վիճակում գտնվող մանկապարտեզ (50 տեղանոց, 25 երեխայով) կա Մայիսյան գյուղում, վթարային վիճակի կամ անբավարար միջոցների պատճառով չգործող մանկապարտեզներ կան Կապս, Կրաշեն և Քեթի գյուղերում:

Հանրակրթական դպրոցների առկայության և դրանց վիճակի վերաբերյալ տվյալները ներկայացված են 5-րդ աղյուսակում և ցույց են տալիս, որ դրանց քանակը բավարար է (բացառություն է կազմում Կարմրաքարը, որտեղ դպրոցական հաստատությաունն չկա՝ բնակչության փոքր թվաքանակի պատճառով): Նույն պատճառով Ջաջուռավանն ունի միայն տարրական դպրոց:

Այսուհանդերձ, բոլոր դպրոցները թերբեռնված են և դրանցում աշակերտների փաստացի քանակը մոտ 3 անգամ պակաս է սահմանված տեղերի քանակից: Բացի այդ, 12 միջնակարգ դպրոցներից յոթն ունի հիմնանորոգման կարիք, 4-ը՝ ընթացիկ նորոգման, և միայն Փոքրաշենի դպրոցի վիճակն է բավարար:

Հիմնանորոգման կարիք ունեն նաև Ջաջուռավանի տարրական և Կրաշենի միջին դպրոցները:

Մեծ Սարիարն ունի նաև երաժշտական դպրոց, Մարմաշենը՝ միջնակարգ դպրոցի շենքում գործող արվեստի դպրոց:

Մշակույթի տուն ունեն Մայիսյան (260 տեղ, վիճակը՝ բավարար), Կապս (270 տեղ, ունի ընթացիկ նորոգման կարիք), Հովունի (300 տեղ, ունի հիմնանորոգման կարիք) և Վահրամաբերդ (300 տեղ, վիճակը՝ բավարար) գյուղերը:

Աղյուսակ 5. Մարմաշեն համայնքի հանրակրթական ուսումնական հաստատությունները

| | Բնակավայր (համայնք) | Տարրական դպրոց | | | Միջնակարգ դպրոց | | | Հիմնական դպրոց | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | տեղ | աշակ | վիճակ | տեղ | աշակ | վիճակ | տեղ | աշակ. | վիճակ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1 | Մայիսյան | | | | 350 | 133 | Հիմն. նոր. | | | |
| 2 | Լեռնուտ | | | | 50 | 6 | Հիմն.նոր. | | | |
| 3 | Կապս | | | | 170 | 86 | Հիմն.նոր. | | | |
| 4 | Կարմրաքար | | | | | | | | | |
| 5 | Կրաշեն | | | | | | | 35 | 7 | Հիմն.նոր. |
| 6 | Հացիկ | | | | 150 | 88 | Հիմն.նոր. | | | |
| 7 | Հովունի | | | | 350 | 50 | Հիմն.նոր. | | | |
| 8 | Մարմաշեն | | | | 500 | 230 | Ընթ.նոր. | | | |
| 9 | Մեծ Սարիար | | | | 120 | 52 | Հիմն.նոր. | | | |
| 10 | Շիրակ | | | | 430 | 120 | Ընթ.նոր. | | | |
| 11 | Ջաջուռ | | | | 200 | 85 | Հիմն.նոր. | | | |
| 12 | Ջաջուռավան | 18 | 6 | Հիմն.նոր. | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | Վահրամաբերդ | | | | 300 | 147 | Ընթ.նոր. | | | |
| 14 | Փոքրաշեն | | | | 110 | 27 | Բավարար | | | |
| 15 | Քեթի | | | | 296 | 78 | Ընթ.նոր. | | | |
| | Ընդամենը | 18 | 6 | | 3026 | 1102 | | 35 | 7 | |

Բավարար վիճակում գտնվող ամբուլատորիաներ ունեն Մարմաշեն և Մայիսյան գյուղերը, ամբուլատորիա կա նաև Ջաջուռում, որն ընթացիկ նորոգման կարիք ունի:

Ընթացիկ նորոգման կարիք ունեցող բուժկետեր կան Կապս, Հացիկ, Հովունի գյուղերում, հիմնանորոգման կարիք ունեցող՝ Լեռնուտ, Կրաշեն, Մեծ Սարիար, Շիրակ, Ջաջուռավան և Վահրամաբերդ գյուղերում: Քեթի գյուղի բուժկետի վիճակը բավարար է: Կարմրաքարում որևէ առողջապահական օբյեկտ չկա:

Կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների տարածքային տեղաբաշխումը ներկայացված է ստորև բերվող քարտեզի վրա:



Հապավումներ-ԲԿ-Բուժկետ, Ա-Ամբուլատորիա, ՄՊ-Մանկապարտեզ, ՏԴ-Տարրականդպրոց, Հ-Հիմնականդպրոց,Ա-Ավագդպրոց,ՄԴ-միջնակարգդպրոց,ՄՏ-մշակույթիտուն,ԱԴ-արվեստիդպրոց

Համայնքների խոշորացման չափորոշիչներով և խոշոր համայնքի տեսլականով սահմանված պահանջների ընդհանրացված գնահատականները Մարմաշեն խոշորացվող համայնքի համար ներկայացված են 6-րդ աղյուսակում:

Աղյուսակ 6. Մարմաշեն համայնքի խոշորացման պայմանների և չափորոշիչների ամփոփ գնահատական

| | **Խոշորացման պայմաններ և չափորոշիչներ** | **Ցուցանիշի գնահատական** | **Ծանոթություն** |
|---|---|---|---|
| 1 | Բավարար մարդկային ռեսուրսներ և առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոն | Կարելի է պայմանականորեն բավարար համարել՝ հաշվի առնելով բնակչության աճի գործոնը | Մայիսյանի բնակչության թիվը 2001-2016թ.թ. աճել է 22 տոկոսով |
| 2 | Բավարար բնական (հողային) ռեսուրսների առկայություն | Բավարար է՝ հանրապետության միջին ցուցանիշից 0,11 հա ավելի | |
| 3 | Ֆինանսական ռեսուրսների | Բավարար չէ՝ | |

| | | | |
|---|---|---|---|
| | առկայություն | հանրապետության միջին ցուցանիշից պակաս է | |
| 4 | Տրանսպորտային կապեր | Բավարար է՝ հասանելիության անբարենպաստ տիրույթում ընդամենը 1 գյուղ է | |
| 5 | Ավտոճանապարհների վիճակ | Կարելի է պայմանականորեն բավարար համարել | Որոշ հատվածներում հիմնանորոգման կամ ընթացիկ նորոգման կարիք կա |
| 6 | Նախադպրոցական հիմնարկներ | Բավարար  է | |
| 7 | Կրթական հաստատություններ | Բավարար է | Դպրոցների մեծ մասը ընթացիկ կամ հիմնանորոգման կարիք ունեն |
| 8 | Առողջապահության օբյեկտներ | Բավարար է մասնակիորեն | Ընթացիկ կամ հիմնանորոգման կարիք ունեն, ցանկալի է Մարմաշենում կառուցել ամբուլատորիա կամ հիվանդանոց |
| 9 | Մշակութային օբյեկտներ | Բավարար է | Որոշ օբյեկտներ ընթացիկ կամ հիմնանորոգման կարիք ունեն |
| 10 | Ընդհանուր սահմանի առկայություն | Առկա են | |
| 11 | Համայնքի կենտրոնի կենտրոնական դիրք | Բավարար է | |
| 12 | Բնակիչների համատեղելիություն և մենթալություն | Բավարար է | |

Այսպիսով, ընտրված 12 պայմաններից և չափորոշիչներից Մարմաշեն խոշորացված համայնքը  լիարժեքորեն բավարարում է  8-ին, մասնակիորեն՝ 3-ին:

Հիմնական շեղումներն են՝

- համայնքի կենտրոնի բնակչության անբավարար թիվը, որը, սակայն, կարելի է պայմանականորեն  բավարար համարել՝  հաշվի առնելով բնակչության աճի միտումները,
- սեփական եկամուտների միջինացված ցուցանիշը պակաս է հանրապետության գյուղական համայնքների համարժեք միջին ցուցանիշից,

*Ծանոթություն. Խոշոր համայնքի փեսլականով սահմանված՝ բավարար ֆինանսական ռեսուրսներ ունենալու պայմանը սոսկ փեսականորեն է կիրարկելի, քանի որ հանրապեությունում չկա ոչ մի ինքնաբավ համայնք, միաժամանակ, 1 բնակչի հաշվով սեփական եկամուփների միջինացված ցուցանիշը ևս (7300 դրամ) գործնականում չի կարելի բավարար համարել:*

- համայնքի կազմում գտնվող 7 գյուղի ճանապարհները հիմնանորոգման կարիք ունեն, երկուսինը՝ընթացիկ նորոգման:

***Որպես առկա շեղումները չեզոքացնելու հիմնական ուղղություններ պետք է դիտարկել՝***

- Միջբնակավայրային ավտոմոբիլային ճանապարհների, կրթական, առողջապահական և մշակութային հաստատությունների ընթացիկ կամ հիմնանորոգման աշխատանքների իրականացումը,
- Խոշորացվող համայնքի կենտրոն Մայիսյանում մարզամշակութային կենտրոնի և ամբուլատորիայի կառուցումը,
- Հողային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացումը, այդ թվում՝ նախկին արդյունաբերական հանգույցի տարածքում նոր արտադրական ենթակառուցվածքների տեղաբաշխումը:

Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ջաջուռավան և Փոքրաշեն գյուղերում չկան մասնավորեցված գյուղատնտեսական նշանակության հողեր, առաջարկվում է քննարկման առարկա դարձնել այդ գյուղերում գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականաշնորհման համար օրենսդրական հիմքեր ստեղծելու հարցը:

Միաժամանակ, նոր ձևավորվող համայնքում ենթակառուցվածքների արդյունավետ տեղաբաշխման, դրանց պակասող օղակների լրացման խնդիրներում համալիր մոտեցումներ ապահովելու նպատակով ցանկալի է Մարմաշեն համայնքի համար մշակել դրա տարածքային զարգացման նախագիծը:

***Մարմաշեն համայնքի կազմավորումը կարող է ապահովել համայնքների խոշորացման հայեցակարգում ամրագրված հետևյալ հիմնական արդյունքները՝***

1. Մարդկային ռեսուրսների համախմբումը, ինչը թույլ կտա բարձրացնել համայնքի կառավարման արդյունավետությունը (որակյալ կադրեր, ընդլայնված կառավարման օբյեկտ, և այլն),

2. Ենթակառուցվածքների համախմբումը և ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացումը, ինչը թույլ կտա կենտրոնացնել փոշիացած ռեսուրսները և դրանց կառավարումն իրականացնել մեկ կենտրոնից, մշակել և իրականացնել համայնքային քաղաքականություն, որը փոքր համայնքներից շատերում բացակայում է,

3. Միավոր ծառայության վրա կատարվող ծախսերի նվազեցումը և ծառայությունների շրջանակի ընդլայնումը,

4. Ենթակառուցվածքների գծով կապիտալ ներդրման գումարների առավել նպատակային և կենտրոնացված օգտագործումը,

5. Համապետական ծրագրերի իրականացման, մասնավորապես, տարածաշրջանի արտադրական ներուժի զարգացման հնարավորությունների մեծացումը,

6. Տնտեսության ճյուղերի՝ հատկապես գյուղատնտեսության զարգացման համար ավելի մեծ հնարավորությունների ստեղծումը,

7. Բնական պաշարների հասանելիությունը և դրանցից օգտվելու հնարավորության ապահովումը գործնականում բոլոր բնակավայրերի բնակիչների համար:

Վերը թվարկվածից զատ, նախադրյալներ կստեղծվեն Մայիսյան բնակավայրը որպես տարաբնակեցման համակարգի նոր տեղային (զարգացման) կենտրոնի ձևավորման համար, ինչի արդյունքում համայնքի կազմում ընդգրկվող գյուղերի բնակչության համար կապահովվի հանրային ծառայությունների հասանելիությունը:

Սույն զեկույցը լույս է տեսնում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, ՇԶՀԳ և ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

**Հրապարակված է**

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ) կողմից
Ընկերության գլխամասային գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

**ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր**

Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0) 10 58 05 39; 58 93 00
Ֆաքս՝ +374 (0) 10 58 92 70
Կայք՝ www.giz.de